

է իր եկեղեցիէն և չուենք շնորհքով քահանայներ որոնք կարենան փարախ վերադարձնել ընդ որ այդ մոլորեալ ոչնաւները:

— Ս. ՀԱՅՐԱՊԵՏԸ գեր մը զրկած է Ս. Պատրիարք Լօր, Ռուսմանիոյ Հայոց հոգեւոր հովուութեան նկատմամբ: Ինչպէս յայտնի է, Եւրոպիոյ հովիւը զանազան պատճառներով չէ կրցած ցարդ Ռուսմանիա մտնել: Ս. պատրիարք Հայրը Խառն ժողովոյ որոշմամբ այս մասին հարկ եղած միջոցները գործադրելէ յետոյ, արգիւնքը պիտի հաղորդէ Ն. Ս. Օժութեան, որ տրամադրէ է Ռուսմանիոյ Վիճակը, հակառակ պարագային, Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկել, ինչպէս կը գտնուի արդէն Պուլիարիոյ հովուութիւնը:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՆԳԼԻՆԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆԸ:

(Edm. Demolins).

«Արարատ»-ի անցեալ համարում յիշատակած ֆրանսիացի Դէմոլէնը իր «Նոր դաստիարակութիւնը» հիմնում է անգլիական կրթութեան վերայ, որի առաւելութիւնը հետեւեալ կերպով է նկարագրում:

Անգլուսաքսերի գերազանցութիւնը անհերքելի իրողութիւն է: Եթէ և այս բանը ամէն տեղ չեն խոստովանում՝ յայտնապէս, այնու ամենայնիւ հաստատուում է այն երկիւղով, կասկածով, իսկ երբեմն նաեւ ատելութեամբ, որ անգլիացիների դէմ՝ ամէն տեղ երևում է:

Մենք չենք կարող ոչ մի քայլ գործել, որ անգլիացիներին յհանդիպինք, չենք կարող մեր հայեացքը դարձնել մեր վաղեմի երկիրների վերայ, որ այն տեղերում չտեսնենք անգլիական ծածանող գրողակիր:

Անգլուսաքսը մեզ դուրս վաճառեց Հիւսիսային Ամերիկայից, որ մեր ձեռքն էր՝

կանադայից մինչև Լուիզիանայի սահմանները, Հնդկաստանից, Մարիիիս կղզուց՝ նախկին իւր ֆրանսիացի և եզրկառուց: Անգլուսաքսը իշխում է Ամերիկայի վերայ, տիրելով կանադա և Հիւսիսային հասանգներին: Աֆրիկէյի վերայ—Հնդկաստանի և Գերմանի միջոցաւ, Ուլիէանիայի վերայ—Աւստրալիայի և Նոր Զելանդիայի միջոցաւ, Եւրոպայի և ամբողջ աշխարհի վերայ—իւր վաճառականութեամբ, արդիւնագործութեամբ և քաղաքականութեամբ:

Աշխարհագրական քարտէզը շատ պարզ ցոյց է տալիս, թէ ինչ ընդարձակութեամբ տարածուել է անգլուսաքսերեան ցեղը, կարծես թէ տիեզերքը կառավարելու նկատմամբ Հռովմէական կայսրութեան ժառանգորդ հանդիսանալով:

Միւս ազգերը, զոր օր. Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Ապանիան, Նոյնպէս գաղութներ ունին, բայց առաւելապէս որոշ տոնակալների գաղութներ. նոքա երկիրը տիրում են միայն զինուորական ուժով, չեն մտնում երկրի մէջ, չեն կազմակերպում, չեն վերանորոգում, արմատ չեն ձգում այնտեղ անգլուսաքսերեան գաղութականի պէս: Ռուսաստանն ու Զինաստանը բռնում են ահագին տարածութիւնների, բայց մեծ մասով անապատ մնացած և քաղաքակրթութեան համար ընդ երկար փակուած:

Իսկ ընդհանրապէս ներկայ ժամանակում՝ անգլուսաքսերը կանգնել են խիստ յառաջագէմ, գործունեայ և եռանդագին քաղաքակրթութեան գլխին: Բաւական է որ նոքա բնակութիւն հաստատեն երկրագնդի որ և է խորշի վերայ, որ իսկոյն կերպարանափոխեն այն վայրը, զարմանալի արագութեամբ մէջը մտցնելով արեւմտեան մշակութեանց նորագոյն կատարելագործութիւնները: Այս մանուկ համայնքները շատ անգամ յառաջագիմութեան ճանապարհում մեղանից տապ են կտրում և գրեթէ արհամարհանօր մեզ կոչում են—Հիւսիսային: Եւ իրօք պէտք է խոստովանենք, որ մենք հնացել ենք այդ նորարարողների համեմատութեամբ: Մի տեսէք, թէ մենք ինչ

ենք արել Նոր Կալիֆոնիայում և Ուլիս-
նիայի մեր միւս երկիրներում: Իսկ նորա
խնդր են ստեղծել Աւստրալիայում և Նոր
Չեանգիայում: Նոյն իսկ Ալժիրիայում, որ
մեր թիֆ տակն է և արդէն 60 տարի տի-
րում ենք: Ընդ ամէն 300,000 ֆրանսիա-
ցիք կան: մինչդեռ 250,000 միւս եւրոպա-
ցիք գրեթէ մեզ հաւատարմել են և սպառ-
նում են շուտով կուլ տալ մեզ:

Նայեցէք, թէ Իսպանիան և Պորտու-
գալիան ինչ բան շինեցին Հարաւային Ամերի-
կայից, իսկ անգլուստրալաններն ինչ գարձ-
րեցին Հիւսիսային Ամերիկան: Չանաղանու-
թիւնը սոր ու ձոր է: Հետեւեալ երեք
թուանշանները շօշափելի յայց կուտան այդ
անժխակի գերազանցութիւնը: Պաշտօնա-
կան վիճակագրութեան նայելով, մի տա-
րուայ ընթացքով Սուզեան ջրանցքով
անցել են 160 ֆրանսիական, 260 գերմա-
նական և 2,262 անգլիական նաւեր:

Սակայն բաւական չէ միայն վիայել այս
գերազանցութիւնը, բեմի բարձրութիւնից
կամ մամուլի մէջ այդ բանը խոստովանել
և նախանձի բարկութիւնից բռնեցքներ
ցոյց տալ անգլիացիներին: Այլ պէտք է
որիւրաք նայել գործի գրութեան և այդ-
քան բարձրութեան հասնելու ջանկութիւն
սրանալ: Ի՞նչ է արդեօք այսպէս տարած-
ուելու գարմանալի ընդունակութեան և
անօրինակ քաղաքակրթող գորութեան գաղտ-
նիքը: Որո՞նք են այդ կէտին հասուցանող
միջոցները: Երբ՝ դաւակներն կենաց և մա-
հու խնդիրն այդ է:

Ի՞նչպէս են կրթում նորա իրանց դա-
ւակներին: Ահա թէ ինչպէս.

1. Նախ և առաջ՝ հայերը զէն կարծում:
Թէ դասակները կառմամ էն իրանց սեպակաւան-
թիւն, իրանց պատկանող իր կամ իրանց
անձի սոսկ շարունակութիւն, որ պէտք է
ապրեն իր թէ միայն ծնողների զուար-
ճութեան համար: Այլ ընդհակառակն նորա
լու գիտեն: որ այդ էակները շուտ պէտք է
սկսեն ապրել անկախ իրանց ծնողներից:
Ուտի և ամէն ջանք գործ են դնում, որ
ամենալաւ պայմաններով արագացնեն այդ
անխուսափելի ազատագործութիւնը: Այդ է

իրանց փայփայած միակ նպատակը: այդ
յատուկ ձեռք է յայտնվում իրանց ծնո-
ղական մտերմութիւնը, որ ամենն ին սորն-
ձգութիւն յունի զաւակներից ազատութիւ-
նը խլել: նոցա իրանց գերի համարել, կամ
իրանց կեանքին պատշաճեցնել, աւելի իրանց
անձնական զուարճութեան ու յարմարու-
թեան բանեցնելով: Իսկ մեր ծնողական
մտերմութեան մէջ բաւական չափով անձ-
նապաշտութիւն կայ, որ ի հարկէ պարտու-
պատշաճ կերպով գիմակի տակ ենք պա-
հում: Երբ թոյլ չենք տալիս, որ մեր պա-
տանիները չէ թէ արտատահման, այլ նոյն
իսկ մի այլ քաղաք գնան, վասն զի մենք
շատ ենք սիրում մեր զաւակներին: Բայց
նձ ոգուտ պիտի բերէ այդպիսի սէրը
մանակներին, թէ ծնողներին:

2. Ծնողները իրանց դասակներէ հեռ կար-
էն էն որպէս հասուն մարդանց հեռ, որպէս
անջատած անհատականութիւնների հետ:

Այս ընթացքով նորա իրօք հասունա-
ցնում են նոցա անկախ անձնաւորութիւն-
ներ են կրթում նոցանից: Ինչպէս որ վա-
րուիք մարդկանց հետ, նոքա այնպէս էլ
կր լինին: Երբ ընդհակառակ մեր զաւակ-
ների հետ միշտ աշխատում ենք վարուել
որպէս մանակների հետ, և ոչ միայն իրանց
մանկութեան ժամանակ, այլ մինչև իրանց
զափահասութիւնը, կամ աւելի ևս ուշ հա-
տակը: Մենք երբէք չենք կարողանում հաշ-
տուել այն գաղափարի հետ, թէ գորա այլ
ևս մանուկ չեն, . . . միայն այն պատճա-
ռով, . . . որ գորա մեր զաւակներն են:

3. Ծնողները դասակներէն այնպէս էն դաս-
ակաւանդում, որ է նկատի ունին կեանքի ապագայ
պահանջները, և ոչ թէ անցեալ պայմանները:
որով որ ապրել են նախկին սերունդները:
Նոքա զաւակների համար օրինակ չեն հա-
մարում իրանց ծնողական անձը, ինչպէս
որ իրանք երբեմն եղել են և ոչ այն մի-
ջավայրը, ուր որ իրանք կենցաղավարել են:
Իսկ մենք վարվում ենք մեր անցեալ գարու-
վերջին ազնուականների պէս, որ այս դա-
րու սկզբներում դեռ գարձեալ իրանց դա-
ւակներին կրթում էին հին պապենական
ժամանակների համար, ծնողեան այն ար-

տօնութիւնները վայելելու որ այլ ևս գոյութիւն չունէին, այն պերճութեան համար, որի համեմատ հարստութիւն չունէին, պալատական կենաց համար, արդէն նշանակութիւն կորուսած հին աւանդութիւնների համար, անդարձ գնացած անցեալի ցնորքների համար:

4. Ծնողները մէջ իւրի ունին զաւակների ոչ միայն առողջութեան մասին, որ մենք էլ անփոյթ չենք թողնում (թէպէտ չենք խղճում նոյնը զոհել հարցաքննութիւնների, ուսման, քաղաքի կեանք վարելու համար), այլ մեծապէս հոգս են քաշում, որ այժմ սփռւած հոգեւորականութիւնը իսկապէս զարգացնուի ոչ թէ աւելորդ մարմնական վարժութիւններով, կամ մարզական աչքակապութիւններով, որոնք վերջիվերջոյ մարմինն աւելի յոգնեցնում և թուլացնում են, այլ ընդհակառակ նորա զարմանալի կերպով ուղիղ դատողութիւն են կազմել ֆիզիքական կենաց հասարակ պայմանների մասին:

Մենք էլ այժմ աշխատում ենք մեր կեանքում մտցնել անգլիական ձևի ֆիզիքական վարժութիւնները, փոխարէն մեր զարհուրելի կանոնաշատ մարմնամարզութեան, որ ոչ այլ ինչ է, բայց մի աւելորդ մանկավարժութիւն, այնչափ անինքնօրինի և անհետաքրքրական, ինչպէս և մանկավարժութեան միւս բաժինները: Մենք այժմ ընդօրինակում ենք անգլիական խաղերը, գիտեմ, որ այս բանն էլ միշտ չի յաջողում, այս բանումն էլ ինչպէս և ուրիշ բաներում չափազանց յափշտակութեամբ ենք գործում, որ այս կրթութիւններում ևս խառնում ենք առհասարակ շատ կաշկանդող կարգադրութիւններ, որ մեր աշակերտներից շատերն աւելի ուրախութեամբ կուղեկնային ազատ մնալ այդպիսի սպարապաներից, քան իրանց մարմինը մարզել այդպիսի կրթութիւններով: Բայց և այնպէս գէթ այս տկար պատճէնից փոքր ինչ գաղափար կարող ենք կազմել նոյն իսկ օրինակի պատուականութեան մասին: Տարակոյս չկայ, որ այս կարգի խաղերը բաւա-

կան չափով նպաստում են ֆիզիքական զարգացման, բաց յայտմանէ անոնք լաւ օժանդակութիւն են վստահութիւն, աներկեւ, նուրիւն և հանգստութիւն ստանալու համար, որ այնպէս կարեւոր են կեանքի մէջ:

5. Այս հերթը չէ, այդ Ծնողները իրանց զաւակներին շատ վաղ Ծանօնացնում են ներսական կենաց գործնական կողմի հետ: Տակաւին մատող հասակում թոյլ են տալիս նոցա շրջել մէն մէնակ, տալիս են նոցա զանաշուր յանձնարարութիւններ իրանց հասկացողութեան համեմատ, կամ նաև փոքր ինչ աւելի դժուարագոյն գործ: Անգլիա, Միացեալ Նահանգներ յաճախող ֆրանսիացիները զարմանում են, տեսնելով այդպիսի բաներ, իսկ անգլիացիք զարմացման վերայ են զարմանում, քանի որ այդպիսի վարմունքը խիստ բնական են համարում և իրանց գաղտնարակութեան մէջ էական օղակ են դարձրել, որոնք մեզ պէս ոչ թէ մատենագիրներ կամ պաշտօնեաներ են պատրաստում, այլ կրթում և ազնուացնում են նախ և առաջ մարդուն, որ կատարեալ մարդ դառնայ:

Եթէ ես չփոխենայի, թէ ընթերցողը կը գայթակղի, ես կաւելացնէի, թէ նորա ողջիկների հետ էլ նոյնպէս են վարվում, ինչպէս և պատանիների հետ, այն ևս մի և նոյն շարժառիթներն և դիտումներն ունենալով, բայց այն ժամանակ հարկ կը լինէր բացատրել, թէ ինչու այդ կարգը, որ մեր մէջ փոքր ինչ վստահաւոր կը լինի, այնտեղ աւելի օգտակար է, քան անյարմար: Իսկ այս բանով հեռու կը շեղուէի:

6. Այնտեղ Ծնողները իրանց զաւակներին սովորեցնում են որ և է յետագործ էն ուսուցանում, մեզ պէս մեծամտաբար չարհամարհելով արհեստները: Նոքա վաղուց ազատուել են այդ հին սխալից, որ մեզ աւելի է վրնասել, քան հարկւր կորուսած կռիւների պարտութիւնները, նոքա մտքով անգամ չեն անցնում, թէ կան ազնուական և գոհակական արհեստներ, նոքա համարում են, թէ կան միայն ընդունակ և անընդունակ մարդիկ, միայն աշխատող և ծոյլ արարածներ: Աւստի և լորդի զաւակը գառ-

նում է ագարակատէր, կամ գործատան մէջ աշխատող, կամ վտճառական, բնաւ իւր արժանիքը չնսեմացնելով: Եւ այդ բանը կեանքի մշտական կանոն է դարձել: Սակայն կայ մի պարապմունք, որ միւսներից աւելի ստոր են համարում նոքա այն է պաշտօնէութիւնն ու քաղաքականութեամբ զբաղուիլը: Նոքա երկու արատ են տեսնում այդ պարապմունքի վերայ. նախ այն, որ ինչպէս նոքա ասում են՝ «ինքն իրա ծախքը չի հանում», վասն զի արդիւնաւոր եկամուտ է բերում միայն բարձրագոյն պաշտօններում. երկրորդ՝ որ մարդու զգաւորութիւնն է խլում, ստրկացնում է: Մինչդեռ անգլուսաքսոնեան դաստիարակութիւնը զարգացնում է անկախութեան ծայրագոյն հակում: Մանաւանդ որ այդ կարգի բարձր պաշտօնները սակաւաթիւ են, այն ևս Անգլիայում վարչական պաշտօնները յանձնվում են առհասարակ կելտեան ցեղի մարդկանց — իրլանդացիներին, շոտլանդացիներին, վալլիսցիներին, իսկ Միացեալ Նահանգներում — իրլանդացիներին և գերմանացիներին: Այս իրողութիւնը խիստ շօշափելի կերպով պարզուած է իմ բարեկամ Պօլ դը Բուզիէ-ի *La vie americaine* նշանաւոր գրքի մէջ:

Մանուկներին արհեստներ ուսուցանելու ձգտումը տոյն ատիճան մեծ ծաւալ է ստանում, որ այնտեղ գործնական կեանքում գործնական կերպով են սովորում այն արհեստները, ինչ որ մեզ մօտ ուսումնարաններում են աւանդում: Զոր օր, զինուորական ճարտարապետութեան (ինժեներիօրի) արուեստը ոչ թէ բարձրագոյն դրութեանն են ուսումնասիրում, այլ հանապազօրեայ պարապմունքներով, — տեսականութիւնը լոկ միայն լրումն է գտնում ամէն վիճակի պարապմունքներում: Իսկ մեզ մօտ, ընդհակառակ, գործնականութիւնը առ ոչինչ են դնում յօգուտ տեսականութեան: Այս բանի ապացոյց է մեր երկրագործական ձեմարանը, որ կանգնեցրել են Փարիզում և որ առաւելապէս պաշտօնեաներ է պատրաստում երկրագործական Նախարարութեան համար: Մենք

մեծ փափագ ունինք նոյնպէս Փարիզում կազմել . . . մեր Մովագնացութեան դրութեանը:

7. Մի հանգամանք ևս նկատենք. Զնուշերը ամէն ջանք գործ են դնում, որ լատինները անպակաս լինեն բոլոր օգտակար գիտելիքներէ: Եւ այլապէս չի կարող լինել մի հասարակութեան մէջ, ուր որ մարդկանց մտածութիւնները ուղղուած են աւելի գէպի ապագան, քան անցեալը, աւելի այնպիսի պարապմունքներին, որոնք անդադար կատարելագործուող են, քան վարչական պաշտօնէութեանը. և այս վերջինները միշտ անշարժ անփոփոխ պիտի մնան և հրապոյր չպէտք է ունենան մեր նկարագրած հասարակութեան մէջ, ուր որ յաջողութիւնը վիճակվում է ոչ թէ սօթի տակ հաստատ պատուանդան ունեցողին և ամուր չըջանակի մէջ բազմած մարդուն, այլ ով որ ձեռներէց է և անձնական արժանաւորութիւններ ունի: Այս բանից է ծագում անգլուսաքսի մշտական փոյթն ու հոգսը, որ հաւաքէ և յարմարաւորապէս գործադրէ լաւ ստուգած և ճշմարտացած իրողութիւնները: Այս ժողովածոյքը շատ անգամ յօրինվում է առանց կարգաբանութեան, գրեթէ զիջվում է խառնիխառն, միայն պէտք եղած ժամանակ ձեռքի տակ լինի իրողութիւնների մեծ պաշարը: Այս պատճառով անգլիական լրագիրներն ևս պէտք է համապատասխանեն այնպիսի պահանջներին, որով անոնք մերիներին այնպիսի աննրման են հանդիսանում, ինչպէս ցերեկը գիշերին: Մեր լրագիրների նպատակն է տալ զուարճացուցիչ ընթերցանութիւն, կամ աւելի լրջմիտների մէջ նաև քաղաքական կրքեր գրգռել (որ նոյնպէս զուարճութիւն և ժամաւաճառութիւն է), Իսկ նոցա լրագիրների գլխաւոր նպատակն է, որ ընթերցողին արագ և ճիշտ տեղեկութիւն տան իրողութիւնների մասին: Անոնց մէջ տեսականութիւն քիչ կայ, ընդհանուր ճապաղ դատողութիւններ քիչ են, այլ միայն իրողութիւններ և իրողութիւններ են, աւելի ոչինչ: Լրագրութեան այս երկու զանազան տեսակներն արդէն ինքնին կարող էին բա-

ւական հասկացնել, թէ որքան տարբեր բաներ են այդ երկու հասարակութիւնները:

Հիմա չղարմանանք, որ հօր խօսակցութիւնները վաւականների հետ այնտեղ միշտ լուրջ նշանակութիւն և իրական կշիռ ունին: Այդ գէպերում չեն գովարանում նորաձեւութեան և նորասիրութեան աշխարհը (ինչ նորեղուկ հագուստներ կան Անգլիայում), Փարիզի բամբաստանութիւնը, կամ պապենական հին ժամանակները, երբ որ կեանքն այնպէս գիրքին հանգիստ և զրոնայի էր: Նորա գովում են ապրիլ-համար արդէն մահաւոր—struggle for life և ինքնօգնութիւն—self help.

8. Ծնունդէն իրանց ծնողական էջանքներէն — հէղինակութիւնը շատ նսաղ եղանակներէն էն գործածում: Նորա այդ իրաւունքը պահում են բացառիկ և անտօր գէպերի համար: Մենք արդէն մի անգամ ասացինք, որ նորա իրանց զաւակների վերայ նայում են, իրեն թէ իրանցից անկախ էակների և իրեն թէ հասունացածների վերայ: Անկարելի է դատարարակել մարդը, միշտ լծի տակ պահելով, մինչև անգամ եթէ լուծը ծնողական լինի: Աստի և նորա համոզում են, թէ իսկական դարդացուցիչ դատարարակութիւնը յաջողվում է ոչ թէ բռնադատութեամբ, այլ քաջալերութեամբ: Նորա ազգում են ոչ թէ հրամաններով, այլ թելադրութեամբ, բարի սաղրանքով, խորհուրդ յայտնելով, միշտ ձեւանալով, թէ իրանք անձամբ շահ չունին այդ խորհուրդների կատարումից, և այդ բոլոր բաների մէջ չեն խառնում իրենանց հեղինակութեան վճիռը: Նորա ժամանակ են տալիս մանուկին, որ լաւ մտածէ, համոզուի և ինքնուրոյն գործէ:

9. Բայց ամենից հիմնական և վրձնական միջոց, որ ես թողեցի վերջը յիշատակելու համար, այս է. դաւանելը գլխին, որ ծնունդէն յայնչ չեն աւանդ իրանց որդոց վէճակը հստակ: Այլ որդիք իրանք պէտք է գիտենան ապրել կեանքի մէջ: Ֆրանսիայում բնականորէն մեծից առհասարակ հարցնում ենք. «Վե՛նք բանի էք պատրաստում ձեր որդուն»: Աւր նա ամենալուրջ կերպով պատասխանում է. «Ես նորան պատրաս-

տում եմ, որ լինի պաշտօնեայ, կամ դատաւոր, կամ մի ուրիշ բան: Եւ իրօք, ինքն իրան լաւ հայր չի համարի, եթէ իւր որդու սպագայի մասին հոգայ, եթէ չաշխատէ նորա համար մի այնպիսի գիրք բաց անել աշխարհքում, ինչ որ ինքը հայրը լաւագոյն է համարում: Այդպիսի հայրը իւր հոգացողութեամբ այնչափ հեռու է գնում, որ իւր բերանից հացը կտրում է, որպէս զի օժիտ և ոգեպահչիկ պարգևէ իւր զաւակներին: Անգլիացի կամ ամերիկացի հայրը օժիտի փոյթ չունի. ամենայն սերունդ պարտաւոր է յունալ միայն իւր սեպհական ոյժերի վերայ:

Մեր մէջ—հակառակ ուղղութիւն է տիրում, նախկին սերունդը պէտք է հոգայ հետեւեալ սերնդեան վիճակի մասին: Հետեւանք էլ այս է լինում: Ասենք թէ դուք ունիք երեք, չորս, կամ հինգ զաւակ. որպէս զի ձեր գիրքը չնուստանայ, որպէս զի ձեր զաւակները նոյն բարձրութեան մէջ մնան, դուք պէտք է բացի ձեր կարողութիւնից, երեք, չորս, հինգ ուրիշ կարողութիւն ևս գիղէք, այն ևս աւելի վաղ, քան ձեր զաւակները չափահաս դառնան, ուրեմն մօտաւորապէս 20 տարուայ ընթացքում: Ապա թէ ոչ դուք չէք կարողանայ նոցա ամուսնացնել, քանի որ նորա առաւելապէս գրամի քանակութեան համեմատ պահանջած ապրանք են դառնում:

Իսկ յայտնի է, որ այս աշխատութիւնը այնչափ տաժանելի է, որ մարդ պատրաստ է դառնում հրաժարուիլ շատ բանից: Եւ ֆրանսիական գերգաստանի գլուխը հրաժարվում է ամէն բանից, բաւական համարելով մէկ կամ երկու զաւակ ունենալը, որպէս զի գէթ գոցա համար աշխատել կարողանայ:

Նստ ժամանակ չէ, որ մի անգամ էլ կարդացի Ֆրանկլինի նամակագրութիւնը: Նա մօրը գրում է իւր որդիներանցից մէկի մասին, որ ցանկութիւն չի ունեցել անձամբ ինքնուրոյն կերպով հոգալու իւր վիճակը և կարծես թէ բոլոր յոյսը դրել էր հօր հարստութեան վերայ. «Ես նորա աչքերը բաց կանեմ» — գրում է Ֆրանկլինը, — վասն զի

ես այնչափ դրամ եմ ծախսում, որ նա պէտք է համոզուի թէ իրան ոչինչ թողնելու չեմ, :

Բայց ի հարկէ դուք սարսափում էք այն մտածութիւնից, թէ ձեր զաւակներին կարելի է թողնել առանց ~~խառնաճիւղի~~։ Ձեր հայրական սէրը զարհուրում է։ Բայց դուք մոռանում էք, որ անգլուսաքոսեան գերդաստանի հայրը, զաւակներին ոչ մի գրոշ չթողնելով, իսկապէս անհամեմատ աւելի է ընձեռում նոցա, քան ֆրանսիացի հայրը։ Նա հէնց այն է տալիս ինչ որ մենք ամէնքս երազում ենք, և ինչ որ ոչ ես, ոչ դուք երբէք չենք տալիս։ Նա տալիս է ձեռներեցութեան այն սքանչելի ոգին, ամէն պատահարներում անձամբ անձին օգնելու այն ընդունակութիւնը, որ մենք ամենայն սիրով ոսկու գնով ձեռք կը բերէինք և որ հէնց մեր դիզած՝ այն ևս այնպէս չարաչար և անարդար կերպով դիզած ոսկով ենք սպանում իւր սաղմի մէջ։ Եւ իրօք մենք ապրում ենք գձուձ մութացիկի պէս. մենք մեզ դատապարտում ենք անզաւակութեան, որպէս զի հնարաւորութիւն տանք մեր զաւակներին ոչինչ չանելու, կամ շատ քիչ բան անելու։ Մենք կարծում ենք, թէ այս հնարով ապահովեցնում ենք նոցա ապագայ վիճակը։ Բայց տեսէք, թէ ձեր շուրջը ինչեր է կատարվում. աշխարհքում ո՞վ է առաջ գնում, ո՞վ է բարձրանում, ո՞վ է հասնում մեծագոյն յաջողութիւնների ամենայն գործերում և ամէն տեղ լաւագոյն տեղեր գտնում։ Տառից ինը գէպքում — հէնց աղքատութիւնից դուրս եկած և չարքաշ կեանք վարած մարդիկ են դռան, որ ամէն բան իրանց ջանքերով են ձեռք բերել, որ առաւելութեամբ դիմացել են և՛ ցրտին և՛ սովին, և որ ապրուստ հայթայթելու համար՝ պէտք է անձնական մեծ ձեռնհրեցութեան շնորհք ցոյց տային։ Իսկ միւս կողմից նայեցէք ուրիշների վերայ, որոնք իրանց յոյսը դրել են առաւելապէս իրանց գերդաստանի, քան իրանց անձի վերայ, որոնց ապաւէնը աւելի ծնողական դրամներ են, աւելի ամուսնու օժիտն է, քան անձնական աշխատութիւնը։ Դռքա

ընկնում են աւելի և աւելի ցած, մինչև խոնարհագոյն աստիճանը, անյաջողութեան են հանդիպում ամէն բանում և ամէնի համեմատութեամբ, թէպէտ և խիստ «խնամով» կրթութիւն են ստացել։ Դռքա կորցրել են ամենայն ազդեցութիւն իրանց երկրում։ Դռքա իրանց ինքնապետութիւնը անհնարին դարձուցին, անձնական աշխատութեամբ բարձրանալու շնորհ չունենալով, դռքա կարող են շունչ քաշել միայն այն գէպքում, երբ որ իրանք միահատիկ որդի լինին, կամ եթէ մեծ օժիտով ամուսնադած են լինում։ Բայց այս բախտը շատերին չի վիճակվում։

Իսկ այն երիտասարդները, որոնց մասին որ առաջ խօսեցի, մարմնով ուժեղ, իրական կենաց ընտել, միշտ նիւթական իրողութիւններին մերձաւոր, միշտ հասուն մարդ ճանաչուած, միայն անձի վերայ յենուելու և վստահ լինելու սովոր, կեանքի վերայ նայող՝ որպէս մաքառման վերայ (ինչպէս որ քրիստոնէութիւնն էլ վարդապետում է) — այսպիսի երիտասարդները, իրանց կատարեալ մատաղ ոյժերով, չեն երկնչում կեանքի ոչ մի գժուարութիւնից, մինչև իսկ սիրում, փնտռում են արգելքներն ու խոչընդոտները և յաղթում։ Եւ այն լուրջ պատրաստութեամբ, որ իրանք վախել են, նոքա այս մաքառման մէջ իրանց անձը զգում են հեշտ և դիւր, և այդպէս էլ աճում ու զօրանում են։

Արդ համեմատեցէք, դատեցէք և վրձնեցէք, ես աշխատեցի ցոյց տալ այն ճախարակներն ու զսպանակներն, որով շարժվում է մի ցեղ, որ հնացած հասարակութիւնների համար աւելի վտանգաւոր է դառնում և ամենուրեք ընդարձակուելով տարածվում է։ Նա յաղթահարում է աշխարհը և աւելի հրաշալին այն է, որ այդ քաջութիւնը կատարում է, իւր ձեռին ունենալով պետական իշխանութեան նուազագոյն չափը։ Հապա ի՞նչ է նորա զօրութիւնը։ Այդ ցեղը ընկերական և մշակութեան ուժի մեծագոյն քանակն ունի, իսկ ընկերական ոյժը հարիւր անգամ աւելի հզօր է բոլոր զօրքերից և ամենայն վար-

չտական իշխանութիւնից:

Մեր մեծագոյն վտանգը, մեր մեծագոյն ախոյեանը ոչ թէ՛ յայնկոյս Հռենոսի է, ինչպէս որ մենք կարծում ենք (այս թշնամու դէմ կարելի է զինուորական ոյժ կանգնեցնել), այլ գլխաւոր չարիքը, գլխաւոր հակառակորդը յայնկոյս Աւ-Մանշի և յայնկոյս Ատլանտեան Ուկրաինու է, ուրեմն ամենուրեք, ուր որ անգլուսաքսը ոտք է հաստատում — որպէս ռազմիրայ կամ ագութակառէր: Նորան արհամարհելով առ ոչինչ են զննում, որովհետեւ նա լոյս է բնկնում ոչ այնպէս, ինչպէս գերմանացին, բաղմամբիւ բանակով և կատարելագործած զէնքով, այլ մէկ մէկ և գութանը ձեռքին, արհամարհում են նորան, որովհետեւ չգիտեն, թէ ինչ է նշանակում գութանը, և ինչ է նշանակում այդպիսի մարդը: Երբ որ այս յայտնի դառնայ, այն ժամանակ միայն կը հասկանան, թէ ինչ է վտանգը և թէ ինչով պէտք է պաշտպանուիլ այն վտանգից:

Ս. Մ.



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՊԱՐԷՈՒՄ.

Մեր դարի ազգային պատմութեան մէջ Հայոց Հայրիկի անունը իրաւամբ մեծ տեղ է բռնում. դեռ հայրապետական աթոռ բարձրանալուց առաջ՝ Հայրիկ գրելով միակ եկեղեցականն է, եղել, որի անունը պաշտելի է դարձել գաւառական ամենախուլ անկրօններում անգամ: Սա ճշմարտութեան, լուսոյ, քրիստոնէական անսահման սիրոյ և գթասրտութեան առաքելայի տիպար է հանդիսացել:

Յիսուս տարի շարունակ մեր Վեհափառ Հայրապետը ազգային եկեղեցական զանազան ասպարէզներում այնպիսի բաղմակողմանի գործունէութիւն է ունեցել, որ այդ գործունէութեան համառօտ պատմութիւնն իսկ հատոր կը կազմէ: Իմ խնդիրը սակայն չհաստատ

մաս է. ես կը փորձեմ միայն նրա գրուածքների մասին մի հարեանցի ծանօթութիւն տալ:

Ստուար չեն այն հատորները, որ Հայրիկը նուիրել է իր սիրած ժողովրդին. հարեւր, երկու հարիւր երեսներէից բաղկացած գրքոյկներ են նրա գրչի արդիւնքը, և եթէ մենք քանակով չափելու լինինք, հայ գրականութեան մէջ Սա ոչ միայն մրցակիցներ, այլ և գերազանցողներ շատ ունի. սակայն Սրա գրուածքների արժէքը նրանց բովանդակութեան առաջնորդող գաղափարների և հեղինակի բեղմնաւոր տաղանդի մէջ է, և այդ կողմից առանձին տեղ են բռնում նոքա: Հայրիկ գրականութեան այն մշակներից չէ, որոնք ասպարէզ են իջնում առանց որոշ ծրագրի, որոնց գրչին ուղղութիւն են տալիս առօրեայ պատահարները, որոնք լոգում են հոսանքի հետ, վարակուած են նորասիրութեան ակտով: Սրա բոլոր գրուածքների մէջ մենք տեսնում ենք որոշ ծրագիր, մի և նոյն առաջնորդող գաղափարները. Սրա բոլոր գրուածքները նոյն գաղափարների տարբեր կողմերն են պարզարանում: Որն է արդեօք այդ ծրագիրը և որոնք նրա շինական գաղափարները, ինչպիսի միջավայրի մէջ են նոքա դարգացել:

Պատանեկութեան և երիտասարդութեան տարիները ապագայ Հայրապետը անց է կացրել Վանում, շրջել ու դիտել է նրա շրջակայքը մի աշխարհ, ուր ամեն քայլափոխում աչքի են բնկնում կիսաւեր շէնքեր, տաճարների, բուրգների, պալատների ու պարիսպների մնացորդներ, որոնք հայրենի նախնի փառքի անխօս վկաններ են. որ կողմը դառնում եւս աւերակների կոյտեր, աւերակ շէնքեր ու աւաններ, աւերակ բերդեր ու աշտարակներ, աւերակ պալատներ ու տաճարներ, աւերակների տակ ծածկուած մի ամբողջ քաղաքակրթութիւն: Փառաւոր աւերակների խղճուկ մնացորդների կողքին ողորմելի խրճիթների մէջ ապրում է հայ ժողովուրդը դարաւոր սարկութեամբ ընթացած, անցելի պատմութեան անտեղեակ, իւր շուրջը սփռուած բեկորների նախկին վիճակով հետաքրքրուելու անընդունակ, ազգային ինքնաճանաչութեան նշոյն